ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հունիսի 24-ի, ժամը 12:00-ի նիստի N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կազմակերպած գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին ներկայացրած **«ՀՀ սահմանամերձ բնակավայրերի անվտանգային հիմնախնդիրները հետպատերազմյան համատեքստում (Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի օրինակով)»** (ղեկավար՝ ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր **Թաթուլ Մելսիկի Մկրտչյան**) **գիտական թեմայի հայտը** երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

Հարևան երկրների ռազմական ներուժի աճը, տարածքային վեճերի սրացումը ձևավորում են նոր աշխարհաքաղաքական իրավիճակ, որում անվտանգության ապահովումը ոչ միայն սահմանակից պետությունների հետ ռազմաքաղաքական հարաբերությունների պահպանումն է, այլ սահմանամերձ համայնքների տնտեսական և ժողովրդագրական ներուժի արագացված զարգացումն է, ինչը թույլ չի տա, որ այդ տարածքների բնակչությունը տնտեսապես և ժողովրդագրական խնդիրների պատճառով հեռանա սեփական տարածքներից: Հետազոտության նպատակը Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի սոցիալ-տնտեսական զարգացման առկա ներուժի գնահատումն է, չօգտագործված հնարավորությունների և բիզնեսի վարման խոչընդոտների բացահայտումը, ներդրումային միջավայրի

բարելավման գործոնների ուսումնասիրության միջոցով մարզի առկա ներուժի առավել արդյունավետ օգագործման, հնարավոր ներդրումների ներգրավման, նոր արտադրությունների կազմակերպման գործնական առաջնահերթությունների վրա հիմնված կայուն զարգացման մոդելների և ռազմավարության մշակումն է: Հետազոտության հիմնական ուղղություններն են՝ մարզերի տնտեսական անվտանգության մակարդակի համալիր գնահատումը, նոր իրողությունների պայմաններում մարզերի բնակչության բնականոն կենսագործունեության սպառնալիքների բացահայտումն ու դրանց չեզոքացման կամ մակարդակի նվազեցմանն ուղղված գործնական առաջարկությունների մշակումը: Նոր սահմաններով պայմանավորված վերոնշյալ մարզերի տնտեսական զարգացման թիրախային, գործնական և «արագ արդյունք ապահովող» մոդելների անհապաղ գործարկումը կարող է ստեղծել երաշխիքներ նշված մարզերի կորսված տնտեսական ռեսուրսներն արագ վերականգնելու, ինչպես նաև վերահաս արտագաղթը կանխելու համար: Այս ամենը ենթադրում է մարզերի բնական և տնտեսական ռեսուրսների (քանակական կամ ներուժային) գնահատում, բնակչության սեռատարիքային կառուցվածքի և դինամիկայի առանձնահատկությունների, տնտեսության հիմնական ճյուղերի կտրվածքով աշխատանքային ռեսուրսների օգտագործումը, բնակչության շրջանում գործազրկության առանձնահատկությունների, բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի նվաճված մակարդակի բացահայտումը, սոցիալական հիմնական ենթակառուցվածքների հասանելիությունը, մարզի տնտեսական զարգացման առկա մակարդակի (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքներ), միջմարզային և արտաքին տնտեսական կապերի վերլուծությունը, մարզի ֆինանսական վիճակի գնահատումը ինչպես բյուջետային, այնպես էլ տեղական միջոցների ներգրավման տեսանկյունից:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Երաշխավորել** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կազմակերպած

գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին ներկայացրած **«ՀՀ սահմանամերձ բնակավայրերի անվտանգային հիմնախնդիրները հետպատերազմյան համատեքստում (Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի օրինակով)»** ("Проблемы безопасности приграничных населенных пунктов РА в послевоенном контексте (на примере марзов Тавуш, Гегаркуник, Вайоц Дзор и Сюник", "The Security Issues of the Contiguous Settlements of the Republic of Armenia in Post-war Context (on the Example of Gegharkuniq, Vayots Dzor, Tavush and Syuniq Marzes)") (ղեկավար՝ ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր **Թաթուլ Մելսիկի Մկրտչյան,** ծածկագիր՝ 21AG-5B087, կատարման ժամանակահատված (ամիս)՝ 60, գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը՝ 6, աշխատանքի վարձատրության գումար (հազար դրամ)՝ 106800, սարքեր, նյութեր և ծառայությունների գումար (հազար դրամ)՝ 1200, գործուղումների գումար (հազար դրամ)՝ 14196, վերադիր ծախսերի գումար (հազար դրամ)՝ 720, հայցվող ընդհանուր գումար (հազար դրամ)՝ 122916) **գիտական թեմայի հայտը** և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2021 թ. հունիսի 24

Երևան